ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2025Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հազ. դրամ	Ծնթ	2025թ. Նախահաշիվ	2025թ. Կատարողական	Կատ. %
Ապարատի պահպանման ծախսեր	1	11,162,451	9,353,042	84 %
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	1.1	9,753,438	8,405,151	86%
Աշխատակիցների սոցիալական ապահովություն	1.2	572,144	426,025	74%
Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում	1.3	734,373	476,397	65%
Ներկայացուցչական ծախսեր	1.4	54,000	30,094	56%
Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում	1.5	48,496	15,375	32%
Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր	2	53,080	24,579	46%
Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր	3	89,161	48,406	54%
Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր	4	23,826	16,127	68%
Չնախատեսված ծախսեր		20,000	-	0%
Ընդամենը վարչական ծախսեր		11,348,518	9,442,154	83%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հազ. դրամ	Ծնթ	2025թ. Նախահաշիվ	2025թ. Կատարողական	Կատ. %
Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ	5	5,500,000	5,500,000	100%
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կատարված ներդրումներ	6	2,510,271	788,280	31%
Ընդամենը կապիտալ ներդրումների ծրագիր		8,010,271	6,288,280	79%

2025թ. կատարողականին կից ծանոթագրություններ

Վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների կատարողականը ներկայացվում է ՖՀՄՍ համաձայն՝ հիմք ընդունելով հաշվեգրման և էականության սկզբունքները:
ԿԲ 2025թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների կատարողականը հաստատված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Խորհրդի կողմից 30.03.2026թ.:

ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) 2025թ. վարչական ծախսերը նախահաշվի նկատմամբ կատարվել են 83%-ով: 2025թ. ԿԲ վարչական ծախսերը փաստացի կազմել են 9,442,154 հազ. դրամ՝ նախատեսված 11,348,518 հազ. դրամի դիմաց: Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ վարչական ծախսերն ընդգրկում են ապարատի պահպանման, լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման, տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման և ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը, ինչպես նաև չնախատեսված ծախսեր:

1. Ապարատի պահպանման ծախսեր

Ապարատի պահպանման ծախսերն ընդգրկում են ԿԲ-ի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, սոցիալական ապահովության, անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և գործուղման, ներկայացուցչական, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2025թ. ԿԲ ապարատի պահպանման ծախսերը նախահաշվի նկատմամբ կատարվել են 84%-ով: 2025թ. փաստացի ծախսերը կազմել են 9,353,042 հազ. դրամ՝ նախատեսված 11,162,451 հազ. դրամի դիմաց:

1.1 Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկը պլանավորման ժամանակ կատարվել է՝ ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջներից, համաձայն որի ԿԲ աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին:
2025թ. համար «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածը պլանավորելիս ԿԲ-ը նախորդ տարվա համեմատ նախատեսել է ընդհանուր ֆոնդի աճ 11%-ով, որի հիմքում ընկած են հետևյալ երկու ելակետային ցուցանիշները՝

- միջին ամսական աշխատավարձ՝ 991 հազ. դրամ (2024թ.՝ 915 հազ. դրամ)
- աշխատակիցների թվաքանակ՝ 820 աշխատակից (2024թ.՝ 800 աշխատակից)

2025թ. ԿԲ և բանկային համակարգի միջին աշխատավարձի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

	ԿԲ աշխատակիցների միջին թվաքանակ	ԿԲ աշխատակիցների միջին ամսական աշխատավարձ	Բանկային համակարգի միջին աշխատավարձ	ԿԲ միջին աշխ.-ի ճեղքվածքը բանկային

							համակարգի միջին աշխ.-ի նկատմամբ
	Բյուջե	Փաստ.	Բյուջե	Փաստ.	Բյուջե	Փաստ.	Փաստ./Փաստ.
2025	820	767	991 հազ.	913 հազ.	1,306 հազ.	1,359 հազ.	(33%)

Նշենք, որ 2025թ.-ին ԿԲ մակարդակով ընդհանուր փաստացի միջին աշխատավարձը ցածր է բանկային համակարգում ձևավորված համապատասխան միջին աշխատավարձից շուրջ 33%-ով: Հարկ է նշել, որ 2025թ.-ին բանկային համակարգում ձևավորված միջին աշխատավարձը 2024թ. համեմատ աճել է շուրջ 6%-ով:

1.2 Աշխատակիցների սոցիալական ապահովություն

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերն առավելապես նախատեսված են ԿԲ-ի ներքին կանոնակարգերով սահմանված ԿԲ անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերն իրականացնելու, ինչպես նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված նպաստների տրամադրման համար: Սույն հոդվածի գծով կատարողականը 2025թ. կազմել է 426,025 հազ. դրամ՝ 74% նախահաշվի նկատմամբ:

1.3 Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում

Այս հոդվածի ներքո մասնավորապես արտացոլվել են ԿԲ աշխատակիցների շարունակական ուսուցմանն ու զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների, փորձի փոխանակման նպատակով ուսուցողական այցերի, տարբեր միջազգային կառույցներում ԿԲ ներկայացուցչությունն ապահովելու համար անհրաժեշտ հանդիպումներին, համաժողովներին ԿԲ աշխատակիցների մասնակցության ծախսերը, ինչպես նաև ռազմավարական նպատակների իրականացման համար նախագծային գործուղումները: 2025թ. այս հոդվածի գծով կատարողականը կազմել է 476,397 հազ. դրամ՝ 65% նախահաշվի նկատմամբ: Նախորդ տարվա նկատմամբ սույն հոդվածի գծով կատարողականն աճել է 12%-ով:

1.4 Ներկայացուցչական ծախսեր

2025թ. ներկայացուցչական ծախսերի գծով կատարողականը կազմել է 30,094 հազ. դրամ՝ 56% նախահաշվի նկատմամբ: Ներկայացուցչական ծախսերը ներառում են միջազգային և տեղական կառույցների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հետ համագործակցություն հաստատելու և /կամ այն պահպանելու նպատակով կատարվող ծախսերը:

1.5 Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում

2025թ. այս հոդվածի գծով կատարողականը կազմել է 15,375 հազ. դրամ (32% նախահաշվի նկատմամբ)՝ նախորդ տարվա ծախսերի համեմատ նվազելով 48%-ով: Նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԿԲ-ը ծառայողական ավտոմեքենաների վերանայման գործընթացի շրջանակներում 2025թ. տարեսկզբից էականորեն կրճատել է իր ավտոպարկը՝ տարեվերջին շահագործման մեջ գտնվող ավտոմեքենաների քանակը հասցնելով 11-ի (2025թ.-ի պլան՝ 29 ավտոմեքենա):

2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր

Այս հոդվածի ներքո պլանավորվել են ամսագրերի և թերթերի բաժանորդագրության, մասնագիտական գրականության ձեռքբերման, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերման և այլ նմանատիպ ծախսերը:
ԿԲ-ի կողմից մասնագիտական գրականության ձեռքբերումը և ֆինանսական ոլորտում մասնագիտացած և բարձր վարկանիշ ունեցող պարբերականների և էլեկտրոնային գրադարանների բաժանորդագրությունը նպատակ ունեն խթանելու ԿԲ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների զարգացումը: Մանրամասն բացվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝ ըստ առանձին ուղղությունների.

Հազ. դրամ	2025թ. Նախահաշիվ	2025թ. Փաստ.
Գրականության ձեռքբերում	9,925	1,036
Ամսագրերի և թերթերի բաժանորդագրություն	32,115	21,623
Լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերում	11,040	1,920
Ընդամենը	53,080	24,579

3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր

Սույն հոդվածի ներքո արտացոլվում են ԿԲ վարչական շենքի և ԿԲ-ին պատկանող մյուս կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական նյութերի ու արագամաշ առարկաների սպառման հետ կապված ծախսերը: 2025թ. այս հոդվածի գծով կատարողականը նախորդ տարվա համեմատ նվազել է 18%-ով՝ կազմելով 48,406 հազ. դրամ՝ 54% նախահաշվի նկատմամբ:

4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր

Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը ներառում են հեռախոսակապի հետ կապված ծախսերը: 2025թ. այս հոդվածի գծով կատարողականը նախորդ տարվա համեմատ նվազել է 9%-ով՝ կազմելով 16,127 հազ. դրամ՝ 68% նախահաշվի նկատմամբ:

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ԿԲ 2025թ.-ի կապիտալ ներդրումների ծրագիրը կատարվել է 79%-ով: Կատարողականը կազմել է 6,288,280 հազ. դրամ՝ նախահաշվային 8,010,271 հազ. դրամի դիմաց:

5. Կապիտալ ներդրումներ ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում

2025թ. ընթացքում իրականացվել են ներդրումներ հետևյալ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալներում.

- «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ՝ 5,001,168 հազ. դրամ՝ պայմանագրով պլանավորված ներդրումների կատարումն ապահովելու և նախանշված արդյունքին հասնելու նպատակով,
- «ՍՏԱԿ ՄԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐ» ՓԲԸ՝ 498,832 հազ. դրամ՝ նորմատիվային կապիտալի ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված:

6. Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված կապիտալ ներդրումները կազմել են 788,280 հազ. դրամ՝ արձանագրելով 31% կատարողական: 2025թ.-ի կապիտալ ներդրումների կատարողականի գերակշիռ մասը՝ շուրջ 505,346 հազ. դրամը կամ սույն ուղղության կապիտալ ներդրումների կատարողականի 64%-ը կազմել են բանկի ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ապահովմանն ուղղված կապիտալ ներդրումները:

2025թ.-ին հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կատարված կապիտալ ներդրումների բացվածքը ներկայացված է ստորև աղյուսակում.

Հազ. դրամ	2025թ. Նախահաշիվ	2025թ. Կատարողական	%
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որից՝	2,510,271	788,280	31%
Շենքերի և շինությունների կառուցում և կապիտալ վերանորոգում	788,262	39,319	5%
Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի, հիմնական միջոցների ձեռքբերում, կապիտալ վերանորոգում	1,692,009	724,111	43%
Տրանսպորտային միջոցներ	30,000	24,850	83%

6.1 Շենքերի և շինությունների կառուցում և կապիտալ վերանորոգում

2025թ. սույն հոդվածի գծով գրանցվել է 39,319 հազ. դրամ կատարողական՝ կազմելով 5% նախահաշվի նկատմամբ: Կատարողականն առավելապես ապահովվել է՝ ի հաշիվ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանը միտված արևային պանելների տեղադրման նախագծի, որի գծով 2025թ. կատարողականը կազմել է 36,319 հազ. դրամ (2025թ. նախահաշիվ՝ 80,000 հազ. դրամ):

2025թ.-ին նախատեսվել էր իրականացնել ԿԲ սերվերային սենյակների՝ միջազգային ստանդարտներին համապատասխան հիմնանորոգման նախագծի աշխատանքներ, որի համար նախատեսվել է 468,262 հազ.

դրամ: 2025թ. ընթացքում իրականացված մրցութային գործընթացի արդյունքում արդեն իսկ առկա է կնքված պայմանագիր, որի գծով աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026թ.-ին: Այս նախագծի գծով փաստացի կատարողականը կճանաչվի ձեռքբերվող հիմնական միջոցների բնույթը արտացոլող համապատասխան հոդվածներում: Նշենք, որ 2025թ. այս նախագծի շրջանակներում գրանցվել է 3,000 հազ. դրամ կատարողական:

Սույն ուղղության ներքո պլանավորված մյուս կապիտալ ներդրումների գծով, այդ թվում՝ ԿԲ-ի վարչական շենքի ճարտարապետական կոնցեպտուալ փոփոխության ծրագրի, տարվում են աշխատանքներ:

6.2 Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում

2025թ. ընթացքում համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ու ոչ նյութական ակտիվների կատարողականը կազմել է 724,111 հազ. դրամ՝ 43% նախահաշվի նկատմամբ: Այս ուղղության կապիտալ ներդրումների կատարողականի հիմնական մասը՝ շուրջ 480,496 հազ. դրամը (66%), կազմել են ԿԲ-ի ընթացիկ գործունեության ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքին ուղղված կապիտալ ներդրումները՝ մասնավորապես SS, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ենթակառուցվածքի գծով:
2025թ. ընթացքում սույն ուղղության կապիտալ ներդրումներում գրանցվել է 243,615 հազ. դրամ կատարողական բանկի զարգացմանն ուղղված նախագծերի մասով (34%), որից 227,807 հազ. դրամ կատարողականը վերաբերում է Տեղեկատվության կառավարման համակարգի ներդրման նախագծին, որը հաստատվել է ԿԲ նախաձեռնությունների շրջանակում՝ որպես բիզնես գործընթացների կառավարման համակարգ:

ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիտորինգի իրականացման գործընթացների ավտոմատացում նախագծի մասով 2025թ.-ին մեկնարկել է մրցութային գործընթաց, որի արդյունքում առկա է հաղթող մասնակից: Ընտրված մասնակցի հետ նախագծի իրականացման աշխատանքներն ընթացքի մեջ են, որոնց գծով կատարողականը կարտացոլվի՝ պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը զուգընթաց:

6.3 Տրանսպորտային միջոցների ձեռքբերում

2025թ.-ին տրանսպորտային միջոցների գծով կապիտալ ներդրումների կատարողականը կազմել է 24,850 հազ. դրամ՝ 83% նախահաշվի նկատմամբ, որն արտացոլում է ձեռքբերված ներկայացուցչական դասի մեկ ծառայողական ավտոմեքենայի արժեքը: